

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի կազմակերպամեթոդական բաժնի փորձագետ Անուշ Ղազարյանի 2019 թվականի դեկտեմբերի 11-ից 2020 թվականի մարտի 06-ը աշխատած ժամանակահատվածի համար

Ես՝ Անուշ Ղազարյանս Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի կազմակերպամեթոդական բաժնում որպես փորձագետ աշխատում եմ 2019 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված N 40 պայմանագրի համաձայն: 2019 թվականի դեկտեմբերի 11-ից 2020 թվականի մարտի 06-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Առաջարկություններ եմ ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ քրեական, քրեակատարողական, քրեական դատավարության օրենսգրքերում և «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում օրենսդրական փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

2. Պատասխաններ եմ ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատման և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 1717-Լ որոշմամբ հաստատված N 2 հավելվածով Պրոբացիայի ոլորտն ընդգրկող միջոցառումների կատարման վերաբերյալ:

3. Պատասխանել եմ Պրոբացիայի ծառայությունում ստացված պաշտոնական գրություններին, ինչպես նաև քաղաքացիների, պրոբացիայի շահառուների դիմումներին և բողոքներին:

4. Մասնակցել եմ պրոբացիայի շահառուների վերասոցիալականացմանն ուղղված սոցիալ-հոգեբանական աշխատանքներին, պրոբացիայի շահառուներին ցուցաբերել եմ իրավական աջակցություն:

5. Մշակել եմ մի շարք հուշագրեր պրոբացիայի շահառուների համար՝ մշակութային և կրթական միջոցառումներին և ծրագրերին մասնակցությունն ապահովելու նպատակով:

6. Մշակել և Պրոբացիայի ծառայության պետի հաստատմանն եմ ներկայացրել պրոբացիայի ոլորտին վերաբերող մի շարք որոշումներ:

7. Մշակել և ՀՀ արդարադատության նախարարություն եմ ներկայացրել պրոբացիայի շահառուների համար վերասոցիալականացման միջոցառումների և ծրագրերի անցկացման մեթոդաբանությունը:

8. Ուսումնասիրել և կարծիք եմ ներկայացրել Պրոբացիայի աջակցության ծրագրի վերաբերյալ, մասնավորապես՝ Պրոբացիայի ղեկավար անձնակազմի, պրոբացիայի ծառայողների և դրանց մասնագիտական վերապատրաստման ձեռնարկների վերաբերյալ:

9. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում որպես Պրոբացիայի ծառայության ներկայացուցիչ մասնակցել եմ դատական գործընթացին:

Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի
կազմակերպամեթոդական բաժնի փորձագետ



Անուշ Ղազարյան

06.03.2020թ.